Ծուշանիկ Կուրղինյան

Պրոլետարիատին բոլոր երկրների

Ձեզ կը մնա
Կյա՛նքն էլ, բա՛խտն էլ .
Աշխատանքի արդյունքն արդար
Ու հավասար . . .
Դուք կը դառնաք
Տերը երկրի,
Որ չլինեն իշխող ու ճորտ,
Կամ վաճառքը մարդավայել
Տենչանքների, մարմնի, խղճի,
Մտքի, խոսքի . . .

Թող ավերվի,
Քանդվի հինը գեհենական
Իր դավերով . . .
Սովը, քաղցը, ցավը, ցուրտը,
Ախտն ու մահը լափե մարդկանց
Բյուր շարքերից անբավ զոհեր . . .
Թող գալարվի
Հառաչանքը երկրի մեջ,
Սիրտ չմնա թաղ անկսկիծ . . .
Ատելության խարույկ վառվի
Հոգիներում:
Թշնամանան մարդիկ իրար,

Եվ ուրանան
Անմեռ սուտը կրոնների . . .
Թող հեծկլտան գիշերների
Մթության մեջ,
Ոչ մի ելքի հույս չշողա
Կարոտ սրտում . . .
Կորուստներից
Թող բթանան ու մոլորվեն
Տեղ չհասած
Նրա՛նք, նրա՛նք,
Որ դարերով ջանք են թափել
Խանգարել ձեզ,
Խլել ձեզնից,
Որ կույր, անզեն՝
Միշտ խեղճ մնաք .
Որ կույր, անզեն՝
Տրտունջ չհանեք,
Չցանկանաք լինել կուշտ, գոհ,
Մարդու նման . . .
Ձեզ կը մնա
Կյա՛նքն էլ, բա՛խտն էլ . . .
Դո՛ւք կերտեցիք
Տաճարները գեղեցկության, վայելքների՝
Արհամարհած բիրտ ուժերը
Տարերային
Ու տեր դարձած հաղթ բնության:
Դո՛ւք ջնջեցիք սահմանները
Արգելքների,
Ալ չմնաց ոչինչ հեռու,
Ոչինչ անհաս,
Ոչինչ անտես . . .
Որքան արագ,
Որքան ուժգին

Հնչեցրիք ղողանջները ձեր շինարար
Աշխատանքի,
Վեհ աղոթքը մարմինների,
Որքան անդուլ
Ու անտրտունջ
Հոգնեցրիք մկաններդ մտքերիդ հետ,
Այնքան անհայտ,
Արհամարհված
Մնաց կյանքում
Պահանջները ձեր միշտ արդար
Բողոքների . . .
Ձեզ կը մնա
Կյա՛նքն էլ, բա՛խտն էլ . . .
Ով աշխատեց՝
Նա պիտի ուտե .
Ով նվաճեց՝
Պիտ վայելե . . .
Այլ կերպ ապրել չեք կամենա
Ու չեք կարող . . .
Աշխատանքով դուք կխլեք
Կյա՛նքն էլ, բա՛խտն էլ՝
Հանուն սիրո՛,
Եղբայրությա՛ն,
Ազատությա՛ն . . .

1920 թ. 1 մայիսի